

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

## Ժամկետային ավանդ «Ավանգարդ+»

### 1. Ավանդի ընդունման ընդհանուր պայմաններ.

- Ավանդների տոկոսադրույքները.

Ավանդի արժույթը	Սկսած 91 օր և ավելի	
	Տոկոսների ամենամսյա վճարմամբ	Տոկոսների կապիտալացմամբ
ՀՀ դրամ	9.5%	9.5%
ԱՄՆ դոլար	7.5%	7.5%
Եվրո	5.0%	5.0%

- **Ավանդի արժույթը`** ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո:
- **Ավանդի ներդրման համար սահմանվող նվազագույն գումարը`** Չի սահմանվում:
- **Ավանդի համալրումը`** Թույլատրվում է ժամկետի ավարտից մինչև 30 օր առաջ:
- **Տոկոսների հաշվարկը`** Բանկը տոկոսների հաշվարկն իրականացնում է հաշվում առկա ավանդի ամբողջ գումարի նկատմամբ, ավանդային պայմանագրի ողջ ժամկետի համար` օրական կտրվածքով: Ընդ որում, Բանկը յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է սահմանված տոկոսադրույքի առնվազն 1/365 հարաբերակցությամբ (իսկ նահանջ տարվա համար բանկը օգտագործում է 1/366 հարաբերակցությունը):
- Կանխիկ մուտքագրված ավանդները և դրանց դիմաց կուտակված տոկոսները տրամադրվում են առանց միջնորդավճարի` 0 ՀՀ դրամ:
- Անկանխիկ մուտքագրված ավանդները, որոնց ժամկետը 30 օր և ավելի է տրամադրվում են առանց միջնորդավճարի` 0 ՀՀ դրամ, իսկ մինչև 30 օր ժամկետով մուտքագրված և ժամկետից շուտ պահանջվող ավանդները տրամադրվում են համաձայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների:

### 2. Այլ պայմաններ և սահմանափակումներ.

- Ավանդատուի նախաձեռնությամբ ավանդի սկզբնական գումարի մինչև 30%-ը ելքագրելու դեպքում պահպանվում են հաշվեգրված տոկոսները և տարեկան սահմանված տոկոսադրույքը:
- Ավանդատուն իրավունք ունի ավանդը ներդնել հոգուտ երրորդ անձի` ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Ավանդատուի ցանկությամբ անվճար (առանց սպասարկման վճարի և հաշվի չնվազող մնացորդի) տրամադրվում է «MasterCard» կամ «VISA» վճարային համակարգի հետևյալ պլաստիկ քարտերը.
  - ✓ մինչև 5.000.000 ՀՀ դրամի կամ դրան համարժեք արտարժույթի ավանդի սկզբնական գումարի դեպքում MC Maestro կամ VISA Electron պլաստիկ քարտ,
  - ✓ 5.000.001 ՀՀ դրամից մինչև 10.000.000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթի ավանդի սկզբնական գումարի դեպքում` MC Standart կամ VISA Classic պլաստիկ քարտ,
  - ✓ 10.000.001 ՀՀ դրամ և ավել կամ դրան համարժեք արտարժույթի ավանդի սկզբնական գումարի դեպքում` MC Gold կամ VISA Gold պլաստիկ քարտ:
- Եթե ավանդը ներդրվում է արտարժույթով, ապա Ավանդատուն գրավոր հավաստում է, որ ավանդային պայմանագիրը կնքելու պահին գիտակցել ու ընդունել է արտարժույթի փոխարժեքի փափախման հետևանքով հնարավոր ռիսկերը:
- Ավանդի ժամկետի երկարաձգման դեպքում օրերի և ավանդի դիմաց տոկոսների հաշվարկը սկսվում է երկարաձգման օրվանից ներառյալ:
- Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 907 հոդվածի 1-ին կետի, Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրվում են ավանդը Բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:
- Ավանդատուն կարող է ցանկացած ժամանակ պահանջել Բանկից վերադարձնել ավանդի գումարը և հաշվեգրված համապատասխան տոկոսագումարները:
- Բանկը պարտավոր է ավանդի գումարը վերադարձնել Ավանդատուին նրա առաջին իսկ պահանջով, մինչև ավանդային պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտը:

- Ավանդատուն պարտավոր է պահպանել ՀՀ օրենքների և դրանց համապատասխան սահմանված բանկային կանոնների, ժամկետային ավանդների ընդունման մասին Բանկում գործող ընթացակարգերի պահանջները:
- Ավանդը վերադարձվում է Ավանդատուին այն արժույթով, որով ներդրվել է այն, բացառությամբ՝ Բանկի կողմից հայտարարված այն ավանդատեսակների, որոնց համար նախատեսված է Բանկային ավանդի պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ավանդի արժույթի փոխարկում այլ արժույթի, ընդ որում Ավանդատուին վերադարձվում է վերջին փոխարկման ժամանակ նրա կողմից ձեռք բերված արժույթը:
- Ավանդը, դրա մասը և (կամ) դրա վրա հաշվեգրված տոկոսները ստանալիս՝ Ավանդատուն Բանկ է ներկայանում անձը հաստատող կամ փոխարինող փաստաթղթով, Բանկային ավանդի պայմանագրի և ավանդի գումարը մուտքագրումը հավաստող բանկային փաստաթղթի իր բնօրինակներով:
- Պայմանագիրը կորցնելու դեպքում, հասցեի փոփոխության, Ավանդատուին նույնացնելու համար այլ անհրաժեշտ փաստաթղթերի կորստի կամ փոփոխության դեպքում, Ավանդատուն պարտավոր է 10 (տաս) բանկային օրվա ընթացքում տեղյակ պահել Բանկին անհրաժեշտ ձևակերպումներ իրականացնելու համար, ընդ որում Ավանդատուն կրում է պատասխանատվություն հիշյալ ժամկետում Բանկին համապատասխան փոփոխությունների մասին չտեղեկացնելու հետևանքների համար:
- Եթե ավանդի վերադարձի կամ երկարաձգման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վերադարձը կամ երկարաձգումը կատարվում է ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ոչ աշխատանքային օրերի համար վճարելով տոկոսներ:
- Բանկը պարտավոր է Ավանդային պայմանագրի գործողության ընթացքում կատարված փոփոխությունները՝ պայմանագրի պայմանների, կողմերի իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության, տարեկան տոկոսային եկամտաբերության և այլն պայմանների վերաբերյալ, առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ, գրավոր, փոստային կապի միջոցով տեղեկացնել Ավանդատուին:
- Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, ֆինանսական գործառնությունների դիմաց վճարվող տոկոսագումարներն իրականացվում են ՀՀ դրամով:
- Բանկը, հանդիսանալով հարկային գործակալ, ֆիզիկական անձ-Ավանդատուի հարկային պարտավորությունները կատարելու նպատակով, Ավանդատուին վճարվելիք տոկոսագումարից իրականացնում է գանձում՝ համաձայն «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի, որը հաշվարկվում է 10 (տաս) տոկոս դրույքաչափով:

### 3. Ավանդատուի իրավունքների պաշտպանությունը՝

- Ավանդային պայմանագրից բխող բոլոր առաջանալու դեպքում, Ավանդատուն կարող է պաշտպանել իր խախտված իրավունքները դիմելով Բանկ, անհամաձայնության դեպքում՝ դիմել դատարան կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին:
- Բանկը պարտավոր է քննել Ավանդատուի բողոք-պահանջը, եթե այն ներկայացվել է մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ Ավանդատուն իմացել է կամ կարող էր իմանալ իր իրավունքի խախտման մասին:
- Բանկը պարտավոր է 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Ավանդատուին տալ վերջնական պատասխան: Բանկի պատասխանը Ավանդատուին չբավարարելու դեպքում, վերջինս վեց ամսվա ընթացքում կարող է դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, կամ դիմել դատարան՝ օրենքով սահմանված կարգով: Ֆինանսական համակարգի հաշտարարը իրավունք ունի քննելու այն պահանջները, որոնք ներկայացվել են հաճախորդի կողմից կազմակերպության դեմ, կապված են կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների հետ և պարունակում են 10 000 000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք այլ արժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ:

### 4. Երաշխավորված ավանդի չափերը՝

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ տարածքում գործող բանկերում ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Երաշխավորվում են ավանդատուի ինչպես դրամային, այնպես էլ արտարժույթային ավանդները:

Օրենքով սահմանված են երաշխավորված ավանդների հետևյալ չափերը.

- եթե ավանդատուն բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը երկու միլիոն հայկական դրամ է.
- եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժույթային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը մեկ միլիոն հայկական դրամ է.
- եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային եւ արտարժույթային բանկային ավանդներ, եւ դրամային բանկային ավանդի գումարը մեկ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչեւ երկու միլիոն հայկական դրամով.
- եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային եւ արտարժույթային բանկային ավանդներ, եւ նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է մեկ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ եւ արտարժույթային բանկային ավանդը՝ մեկ միլիոն դրամի եւ հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

Ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ եւ ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ:

#### 5. Տարեկան տոկոսային եկամտաբերության չափը՝

Տարեկան տոկոսային եկամտաբերության չափը դա այն տոկոսն է, որն անձը կստանա 1000 ՀՀ դրամ ավանդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածում տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառմամբ եւ տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով:

Ներգրավված ավանդների տոկոսադրույքի հաշվարկը կատարվում է հետևյալ պարզ տոկոսադրույքի ստանդարտ բանաձևի կիրառմամբ.

$$Sp = [P * i * t / K] / 100 - T,$$

որտեղ Sp – ստացվելիք տոկոսագումարը,

P – ներդրվող ավանդի գումարը,

i - ավանդի տարեկան տոկոսադրույքը,

t – ավանդի դիմաց տոկոսների հաշվեգրման օրերի քանակը,

K – տարվա օրերի քանակը,

T - եկամտահարկի դրույքաչափը:

Այսինքն՝  $Sp = [1\ 000 * 9.5 * 363 / 365] / 100 - 10\% = 85.03$  ՀՀ դրամ:

#### 6. Տվյալ ավանդային պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ՝

Այսպես, ներդրվող ավանդի գումարը կազմում է 100 000 ՀՀ դրամ, ներդրման օրերի քանակը՝ 91 օր.

Քանի որ, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 907 հոդվածի 1-ին կետի, Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրվում են ավանդը Բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը, ներդրվող օրերի քանակը կկազմի 89 օր:

- պարզ տոկոսադրույք.

$$100\ 000 * 9.5 * 89 / 365 / 100 - 10\% = 2\ 084.7 \text{ ՀՀ դրամ:}$$

- Տոկոսների կապիտալացում.

$$(100\ 000 * ((1 + 9.5 * 30 / 363 / 100)^3 - 1)) - 10\% = 2\ 122.4 \text{ ՀՀ դրամ:}$$

#### 7. Այլ տեղեկություններ.

Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար կարող եք այցելել Բանկ կամ զանգահարել 59-20-40 կամ 59-20-17 հեռախոսահամարներով: